ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժին Մասիսի բաժանմունք

ք. Մասիս,0801, Արարատյան 3, թիվ 4, հեռ.060713510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

17.11.2021թ. **ք. Մասիս**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի հարկադիր կատարող՝ արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Մարկարյանս, ուսումնասիրելով թիվ 06527091 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 31.07.2020թ. տրված թիվ ԱՎԴ2/0976/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Աշոտ Նահապետի Թեվոնյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 60.801ՀՀ դրամ և հաշվեգրվելիք տոկոսներ՝ բռնագանձումը տարածելով գրավադրված գույքի վրա:
Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ‹‹Դատական ակտերի հարկադիր կատարման մասին›› ՀՀ օրենքի 28, 28.1, 43 և ‹‹Հրապարակային սակարկությունների մասին›› ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Աշոտ Նահապետի Թեվոնյանի կողմից գրավադրված ներքոհիշյալ ոսկյա զարդերը

հ/հ	գույքի անվանումը և նկարագիրը	քանակը	միավորի գնահատման գինը	միավորի մեկնարկային գինը
1	Մատանի, 580 հարգ, 4.9գր.	1 հատ	79.380 ՀՀ դրամ	59.535 ՀՀ դրամ

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝**http//harkadir.ajurd.am** կամ **www.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 07.01.2022թ.

Որոշումն ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: